

Քեզ յաւիտենական սիրով
սիրեցի: Երեմ. ԼԱ. 3
Ինչպէս որ մայր մը իր որդին
կը մխիթարէ, ա՛նպէս ալ ես
ծեղալիտի մխիթարեմ: Ես. ԿԶ 13
Քու. Աստուածդ դիմաւոր
բերու. պատրաստուէ, ո՛վ Իս-
րայէլ. Ամուս. Գ. 12

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵԻՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ես եմ Տաւրան ու. Տշմար-
տութիւնը եւ. կեանքը. Յովթ.
ԺԳ. 6
Որդին Մարդոյ եկաւ որ-
պէս զի կորսուածը վնասուէ
ո. վրկէ. Գուլ. ԺԺ. 10
Ես եկայ որ կեանք ունե-
նան, եւ ալ աւելի ժննենան:
Յովթ. Ժ. 10

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Բաժնեգին տարեկան.—Յրամսա եւ յուրիա 5 Յր. Պալքանեան Երկիրներ 1 շիւ. ուրիշ Երկիրներ 1,50 Շիւ

Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

Թիի 8

Բ. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐ 1926

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՐԵԿՑՈՒԹԻՒՆԸ

Pasteur W. H. Guiton, Paris

Ինչպէս անձի երկու ուտելիք կը փնտռէ,
այնպէս ալ վշտացեալը կարեկցութիւն կը
փնտռէ: Երբ մեր սիրտը փշրուած է ցաւով,
մենք ծարաւը կ'ունենանք մեր ճանապարհին
վրայ հանդիպելու Տշմարիտ բարեկամներու,
որոնք գիտեն մեզ հասկնալ եւ մեր արցունքները
բաժնել: Երբեմն մէկ խօսք մը, կամ ձեռքի
սեղմում մը եւ կամ գուծով լեցուն ակնարկ մը
միայն, որ կը բաւէ մեր ցաւը մեղմացնելու:
Որքան խղճալի է վիճակը անոնց, որոնք մէկ
սրտակից հոգի չունին մուծ վայրկեաններու
մխիթարիչ. մանաւանդ անոնք որ չարութեամբ
շրջապատուած, չար աչքերէ դիտուած կ'զգան
իրենք զիրենք:

Բայց մարդկային կարեկցութիւնը որքան ալ
թանկագին ըլլայ՝ ան մեզ չի կրնար գոհա-
ցնել: Ցաւեր կան որ մեր ամենալաւ բարեկամ-
ները, նոյնիսկ մեր մայրը անկարող են մեղմա-
ցնել: Ո՛վ կրնայ դարմանել անյաշողութեամբ,
հիւանդութեամբ կամ անարդարութեամբ բաց-
ուած վէրք մը: Ո՛վ մասնաւորապէս, պիտի
կրնար դարմանել սուգի բացած մէկ վէրքը:
Ի՛նչ կրնաք ըսել այն բազմութեան, որոնք մե-
ռելոցի օրը գերեզմանոցը կը լեցնեն: Ի՛նչ ազ-
դու մխիթարութիւն սա ծնողաց, որոնք մէկ
հատիկ զաւակ մը կորսնցուցած են. սա կնոջ
որ իր սիրեցեալ ամուսնին կ'որոշուի կ'ողբայ,
սա որբեւայրի կնոջ որ իր միակ յոյսը եղող՝
իր օճախին միակ լոյսը եղող կտրիճ տղան է
կորսնցուցած: Հազիւ թէ համարձակինք այս.
պիսի բզբտուած սրտերու առջեւ մեր սրտցա-
լութիւնն ու համակրութիւնը յայտնող քանի մը
բառեր արտասանել: Իւ անկարող մխիթարելու,

մենք մեր արցունքները կը խառնենք անոնցին
եւ կ'աղօթենք:

Ա՛հ, աղօթք: Պէտք է աղօթել եւ մանաւանդ
տանջուողները իրենք պէտք է աղօթեն, որով
հետեւ կայ կարեկցութիւն մը, անսահմանօրէն
աւելի ձգտեալ եւ աւելի հզօր քան մարդոց
ցուցուցածը: Աստուծոյ կարեկցութիւնն է այդ:

Մենք չենք կարող կասկածիլ այս կարեկ-
ցութեան վրայ, քանի որ Աստուած անձամբ եկած
է զայն մեզի յայտնել: Անիկա մարդացաւ մեզ
ցուցնելու թէ Ան գիտէ մեր ապրած կեանքը
բոլոր իր վտանգներով ու տագնապներով: Ա-
նիկա վշտացեալներէն խոյս չտուաւ, այլ ալ
աւելի զանոնք նախադասեց եւ անոնց ընկերա-
ցաւ. Անիկա անոնց իւրաքանչիւրով հետաքրք-
րուեցաւ: Տան ուեցաւ հ'ւանդներուն, յուսա-
հատներուն, հարստահարեալներուն, աշխարհէ
չհասկցուածներուն հետ եւ անոնց բոլորին
տուաւ հարկ եղած օգնութիւնը:

Դուք որ ծանր բեռներու տակ կը հիւժիք,
դուք որ թերեւս յուսահատութեան անդունդին
եզերքը կը գտնուիք, աղօթեցէ՛ք: Յիսուս քրիս-
տոս ձեզմէ հեռու չէ: Անիկա ձեզ կը սիրէ եւ
ձեզի կ'ըսէ. «Եկէ՛ք ինծի եւ ես ձեզ պիտի
հանգչեցնեմ»:

Եկէ՛ք, Անիկա կարող է ընել ձեզ համար
զայն, որ ըրած է ձեզմէ առաջ հազարաւոր-
ներու:

Եկէ՛ք, Անոր կարողութիւնը Անոր գեղութեան
չափ անսահման է:

Եկէ՛ք առանց ուշանալու, բոլոր ձեր ցաւե-
րով միասին, քանզի Անիկա Աստուած է «ԲՈ՛Ր
մխիթարութեանց»:

.....

ՄԵՂԱԿՈՐԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեղաւորին պարտքն է մեղքէն հրաժարիլ եւ Տէրոջը դառնալ իսկ փրկչին պարտքն է մեղաւորը ընդունիլ, փրկել եւ արդարացնել : Եսայ. Ծե. 7 : Մեղքի շղթաներու տակ կաշկանդուողը՝ միայն Տէր Յիսուսի արինովը կարող է փրկուիլ :

Ամէն ով որ կուգայ Թաիւած արեան շիթերուն տակ իր բոլոր մեղքերովը, հոն կը խոստովանի զանոնք, կը ձգէ ինչ որ աշխարհային է եւ անոնցմէ երեսը կը դարձնէ, ահա այն ատեն նորէն ծնած կ'ըլլայ : Երբ հին կեանքը փոխուած կը տեսնէ մէկը, գիտնալու է որ Աստուծոյ զաւակն է :

Նորոգուած հոգիին համար Թատրոնը իր հմայքը բուն, գեղախաղը չհրապուրեր զայն, սիկարը այլեւս իրեն համար անհամ կուգայ. օղիին բաժակը այլեւս իւրանուծիւն բունի անոր վրայ : Այս է Աստուծոյ զաւակաց ճշմարիտ վկայութիւնը : Անոր զաւակները միայն կրնան վկայել Թէ Տէրը ինչ հրաշքներ կը գործէ ինկած մեղաւորին մէջ երբ իրեն կը դառնայ : Պետրոս, Պողոս եւ ուրիշ Առաքեալներ մեզի միշտ կը պատմեն Թէ Տէրը իրենց ինչեր օրած է :

Արինով գծուած ճամբան յաւիտենականութեան ճամբան է : Անոր ճամբան մարդը դէպի Գողգոթան կը տանի, անոր վերելքը դժուար է, զոհողութիւն կը պահանջէ, բայց փառքի դափնին անկէ միայն ստանալ կարելի է :

Մեղաւորները՝ խաչին նախատինքն հաճոյք չեն զգար, առանց գիտակ ըլլալու Թէ խաչին նախատինքը հոգիին պարծանքն է :

Պէտք է ձեզի նորէն ծնանիլ : Յովհ. Գ. 2, 3, 4.

Յիսուս հասկցուց Թէ չիք փրկուած ինչ առանց նորէն ծնանելու : Անոր հրամանն է նորէն ծնանիլ : Եթէ այս հրամանը ընդունինք՝ յաւիտենական կեանքը մերն է, եթէ ոչ մերժելը մեզ դատապարտութեան կ'առաջնորդէ :

Իսրայէլի ժողովուրդը անհնազանդութեան պատճառաւ օձերէն խայթուեցան ու մեռան : Մենք ալ մեր անհնազանդութեամբ շատ անգամ մեղքի օձերէն խայթուելով մահուան վտանգին մէջ կը գտնուինք, բայց չմոռնանք նայելու այն Գառն Աստուծոյն, որ խաչին վրայ կեցած մեզ կը կանչէ : Յովհ. Գ. 14-15. Փառք այդ Գառնին : Ո՛վ մեղաւոր փրկչիդ դարձիր, հոն է որ պիտի կրնաս գտնել ինչ որ աշխարհի մէջ չկրցիր գտնել : Հպարտութեան ծառէն վար իջիր, Յիսուս քեզի հետ քու տանդ մէջ գործ ունի : Դուկ. ԺԺ. 1-14 : Խոնարհէ՛, ապաշխարէ՛ եւ Անոր գնա՛ :

Եթէ մեղաւոր ես եւ քու միտքդ, սիրտդ եւ հոգիդ մեղքով մեղաւոր ես, գնա՛ Անոր, Անոր լոյսը զօրաւոր է քու խաւար կեանքդ լուսաւորելու :

Առանց մեղքի մարդ չկայ, ատոր համար ամէն ոք ամէն օր ապաշխարելու պէտքն ունի : Աստուծոյ ուրախութիւնը մեղաւորին դարձին մէջ կը կայանայ : Աստուծոյ ձեռքը փրկելէն չկարճնար եւ ոչ ալ ականջները լսեալն : Անոր ձեռքը որքան փրկէ՝ այնքան կը զօրանայ :

Մեղաւորը փրկուածին ընդունելէ վերջ՝ պարտի ամբիւր գործնական կեանքը : Իբր փրկուած պրպտէ Աստուարանը, հոն պիտի տեսնես Թէ Աստուարանը զօրութիւն ունի պահելու, ազատելու, սրբացնելու եւ բարձրացնելու :

Աստուարանէն պիտի սորվինք քրիստոնէական կեանքը ապրիլ, անով պիտի ճանչնանք ձգնարտութիւնը, ձաճարն եւ կեանքը :

Վերստին ծնունդ ստացողի մը համար բաները փոխուած կ'երեւին. ինչ որ առաջ կ'ատէր, հիմա կը սիրէ եւ ինչ որ առաջ կը սիրէր, հիմա կ'ատէ : Մեղանքէն առաջ հաճոյք կ'առնէր, հիմա նողկանք ու զգուանք : Անոր աջքին տեսութիւնները նոր, ականջին լսելիքները նոր, եւ խօսելիքները նոր են : Երանի այսպիսիներուն եւ փառք Աստուծոյ որ աշխարհիս մէջ պակաս չեն ասանկներ :

Թրգմ. Անգլիերէնէ

Ակաթ

ԱՆՆԱ ՏԵՐ ԹՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

.....

ԱՍՏՈՒԾ ՄՈՎ ԼԵՅՈՒՆԻ

«Լայն բաց քու բերանդ, ու
զանկիւս եւ պիտի լեցնեմ»

Սաղմ. ԴԱ. 10

Ստիկա Աստուածային խոստում մըն է. Աստուած պիտի կատարէ, բայց պայման մը կայ. «Եթէ բերանդ լայն բանաս՝ այն ատեն եւ զանկիւս պիտի լեցնեմ» : Աստուած առատաձեռն է, միշտ լեցուն կուտայ : Կուգէ որ մենք սիրով, հաւատքով, յոյսով, քաջութեամբ, խաղաղութեամբ, ուրախութեամբ, սուրբ հոգիով լեցունեմք Նախ խնդրէ անկէ, շատ ու մեծ ամաններ բեր անոր առջեւ, սիրտդ Թափէ անոր ներկայութեանը, բերանդ լայն բաց. Ան պիտի լեցնէ զանկիւս օրհնութեամբ, խոսքով նոր երգով ու փառաբանութեամբ : Որո՞ւն կը բանաս բերանդ. որո՞ւն կը բանաս սիրտդ. որո՞ւն կը յայտնես սէրդ : Միայն Յիսուսի բաց, միայն անոր յայտնէ : «Ո՛վ ունիմ եւ երկինքի մէջ, երկրի վրայ ալ քեզմէ ուրիշը չեմ ուզեր : Իմ մարմինս ու սիրտս կը մտնին, բայց Աստուած իմ սրտիս զօրութիւնը ու իմ բաժինն է յաւիտեն» : (Սաղմ. ՀԳ. 25, 26) լեցունելու համար պարպուիլ պէտք է : Ի՞նչ բաներէն պէտք է պարպուինք. — Ստատանայէն, աշխարհէն, մեր անձէն, մեղքէն : Սիրելիս, քու մէջդ ո՛վ կայ, ուստանա՛ն. Թէ Աստուած : Երկուքը մէկ չեն կրնար կենալ հոն, արդեօք սպաշխարելով Յիսուսի յոնձնուած եւ. ամէն ատեն բերանդ, աչքերդ, սիրտդ բաց են Անոր : Ան կըսէ՝ «Լայն բաց, եւ պիտի լեցնեմ» : Ինչո՞վ պէտք է լեցունինք. Աստուծով, Բերանով, Հոգին Սուրբով : Անով լեցուիլ, Անով ապրիլ, Անով աշխատիլ. այս է հոգեւոր կեանքի մէջ զօրութեան գաղտնիքը : Ապրի՛լ կ'ուզես, Անով. աղօթի՛ւ կ'ուզես, Անով. քարոզի՛ւ կ'ուզես, Անով. ամէն բան Անով : Առանց Անոր բան մը չես կրնար ընել : — Սուրբ Գրքէն կարգաւ հետեւեալ համարները. ԾԽԳ. 16-19, ԼԲ. 24-32, ԼԺ. 2-7, Բ. Օր. ԼԴ. 10-12, Ա. Ժազ. Ա, Բ եւ Գ. ԿԼԼԼԼԼԼԼԼԼԼԼ. Յոր ԽԲ. 1-7,

Սաղմ. ԽԲ. Դան. 2. 10-11, Թ. 3-20, Ամբ. Գ. 17-19, Մաղ. Գ. 10, Մատթ. ԺԷ. 1-8, Ղուկ. Բ. 52, Յովհ. ԺԷ. ԷԼԵՆ : — Այս համարներէն կը հասկնանք որ Աստուծոյ լայն րացունեցան Աստուծոյ եւ լեցունեցան Անով : Շատերնիս մեղքով լեցունած ԸԼԼաւով բնաւ չենք բացուիր Յիսուսի. շատերնիս ԹԷ՝ Յիսուսին եւ ԹԷ՝ Դատանային կը բացուինք. հաւատքնիս քիչ է, որովհետեւ Անիկա մեզ բոլորովին լեցունցած չէ : Մաս մը միայն յատկացուած ենք Անոր : John R. Mott կ'ըսէ, Մուտի հետեւեալ պատկերը կը գործածէր, ցուցնելու համար ԹԷ ինչպէ՞ս լեցունելու է : Անիկա պարապ բաժակ մը կ'սուշէր ու կ'ըսէր. «Ինչպէ՞ս ընեմ որ այս բաժակէն ոգը պարպուի» : Իբր պատահական բաժակը ջուրով կը լեցնէր, որով ըսել կ'ուզէր ԹԷ մեր սրտերը՝ պարզապէս բաշտուած ենք որ Ս. Հոգին ներս մտնէ ու զմեզ լեցնէ :


Այս շիտակ է, բայց մարդն ալ այս պարպուելու գործին մէջ իրեն յատուկ բաժինը ունի : Եթէ բաժակին յատուկը մանր աւազներ կան, ջուրը լեցնելը սրժէք չունի, քարերը ատանկով չեն հեռանար : Երբ սիրտը դեռ ու եւ է մեղքի մը կապուած է, եթէ կայ սովորութիւն մը որ չկրնար ձգուիլ, անկարելի է որ մարդ լման բացուի, եւ Տէրը զայն լման լեցնէ : Լման բացուիլ պէտք է : Ատուած լման բացուողին համար կ'ըսէ. «Ես պիտի լեցնեմ» : Դաւիթ ԻԳ սաղմոսին մէջ կ'ըսէ. «Իմ բաժակս խիստ լեցուն է» : Յիսուս կ'ըսէ, «Ես եկայ որ կեանք ունենան եւ ալ աւելի ունենան» : Շատ կե՛ր այն կենդանի հացէն, շատ խմէ՛ կենդանի ջուրէն : Ուստի Բրիտանի մէջ մտիք, Թաղուէ, գուն մի երեւնար, բան մը մի՛ ընէր, մի՛ ապրիր : Ան պիտի երեւի, պիտի ապրի քու մէջ, գուն ալ Անոր մէջ...

«Լեցուր զիս Տէ՛ր Բեղով» . Ամէն :

ՍՏԵՓԱՆ 3. ԹՐԱՇԵԱՆ

Պէյրուս, 30 Յուլ. 1926

ԱՂՕԹՔԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ



«Քանիք թի ընծերցոյներուն ծանօթ Սատու. ճան նէլըն իր առաքելական շրջանը բրած միջոցին, հետեւեալ պատմութիւնը պատմեց Մարտիրոս մէջ :

Քարոզիչ մը կար, որուն ունկնդիրները բանտարկեալ աւազակներու խումբէ մը կը բաղկանար : Քարոզիչը կրկնակ պաշտօն ունէր հոս. անոնց վրայ հսկել, ապա քարոզել անոնց փրկութեան աւետարանը : Ասոնցմէ իւրաքանչիւրը ամենայն հաւատարմութեամբ կը կատարէր :

Օր մը աւազակներուն էն սարսափելին խոյս տուաւ :

Քարոզիչը, որ 2-3 ժամ յետոյ միայն իմացած էր զայս, շուտով ձի հեծնելով սկսաւ փնտռել փախստականը անտառներուն մէջ :

Վարպետորդի աւազակը շատ լաւ գիտէր քարոզիչին պարտաճանաչութիւնը եւ գիտէր թէ ինչպէս որ անիկա չէր հանգչեր մինչեւ որ բանտարկեալները մէկիկ

մէկիկ դարձի չգային, այնպէս նաեւ. չպիտի հանգչէր մինչեւ զինքը չգտնէր : Բայց ազատութեան մարմաբը զինքը գլխէհան կ'ընէր :

Ուստի որպէսզի քարոզիչը բոլորովին մոռնար զինքը փնտռել՝ հետեւեալ դիւային ծրագիրը յղացաւ :

«Քանի որ ինք տունէն բացակայ է, կ'երեւամ կը սպաննեմ իր կինը երեք զաւակներով միասին, եւ ինքը դեռ թող գայ ու զիս հալածէ» :

Ահա այս պատանայական գաղափարներով տարուած, գաղտագողի մտաւ քարոզիչին տունը, ջմոռնալով հաւատարմութեան տակ պահել երկայն դաշոյն մը :

Տիկինը խոհանոցին մէջ իրիկուան կերակուր կը պատրաստէր : Այս պարագայէն սգտուելով՝ նա սեւեակէն ներս մտաւ եւ պահուեցաւ մեծ սեղանին լայն սիւղոցին տակ :

Իրիկուան ընծրիքէն յետոյ, մօր եւ զաւակներու միջեւ սերն խօսակցութիւն մը տեղի կ'ունենար, մանկանց անկեղծ հարցումները կը մտանէին տիպար ընտանիքի մը բոլոր նշանները : Յետոյ մայրը հաւաքեց իր զաւակները եւ սկսաւ կարդալ Ս. Գրքէն :

Աւազակը ուշադիր մտիկ կ'ընէր :

Քարոզիչին կինը սաղմոս մը կը կարդար. Ի՞նչ տախրիֆակ զգացումներով կը լեցուէին վրէժխնդիր չաւազործին սիրտը, ու նոր, բոլորովին նոր սարսուռ մը կը պատէր զինքը . . . Յիրաւի՛, շատ լաւ էր Աստուծոյ խօսքէն, բայց այս գիշերուա՞նր . . . :

Մինչ աւազակը խորատուգում էր այս անսովոր զգացմանց մէջ, յանկարծ լսեց հետեւեալ պարզ աղօթքը, որ ամենը մանուկներու հրեշտակային բերնէն կը բղխէին :

«Ո՛վ Հայր մեր, պահէ մեր հայրիկը որ ան չար մարդուն ետեւէն գացած է, պահէ զայն բոլոր վտանգներէն : Իսկ այն մարդը, անիկա խեղճ մարդ մըն է, Տէ՛ր, գիտեա թէ մեղքին ու սատանային ձեռքը որքան կը տառապի. գեթ՝ անոր վրայ ալ, շնորհէ՛ որ քեզի դառնայ, աղինս մարդ մը ըլլայ եւ քու զաւակդ կոչուի» :

Աւազակը իր ականջներուն չէր կրնար հաւատալ :

Ի՞նչ, ինք եկած էր զանոնք խողխողելու եւ ահա անոնք իրեն համար կ'աղօթէին : Անոնք չէին խնդրեր իրենց Աստուծոյն որ զինքը չարքարէ կամ սպաննէ կամ բռնել տայ, այլ կը խնդրէին որ ինք ըլլար ազնիւ մարդ մը, եւ Աստուծոյ զաւակը կոչուէր :

Աւազակը որքան կը խոկար այս զգացումներով՝ այնքան աւելի արցունքները առատօրէն կը հոսէին իր աչքերէն, եւ մեծ դժուարութեամբ կը զսպէր իր հեծկըլտութիւնը : Ի՞նչ ընելու էր հիմա, ելլել եւ խոտովանիլ, չէ՞ որ զինքը դարձեալ բանտ պիտի տանէին : Հապա ի՞նչ ընելու էր :

Պահ մը լուռ կեցաւ եւ ելքին սպասեց :

Քիչ յետոյ մայրիկը իր զաւակները հաւաքեց եւ գնաց պտուկելու :

Սենեակին լոյսը մարեցաւ : Պահ մը վերջը ննջասենեակէն եկող մանկանց իրիկուան մեղմ երգերու ծայնն ալ տեղի կուտար լուռութեան եւ խաւարը կ'իշխէր ամէն կողմ :

Մեր աւազակը դեռ իր Թաքստոցին մէջ էր : Ի՞նչ ընէր. ի՞նչ որոշէր . . . :

Դեռ կը խոկար . . . : Արցունքները չորցած էին աչ-

քերուն մէջ, իր մտքին առջև, երկու պատկեր կը ներկայանային սարսափելի գոյներով: Մարդասպան ըլլալ եւ ամբողջ կեանքին մէջ ազատ շունչ առնել, բայց բնականորոշած խղճով եւ կամ ելլել խոտովանիլ, եւ խնդրել անկէ զինքը բանա առաջնորդել:

Ազատութիւնը քաղցր էր, բանաբ դառն:

Սակայն խղճի խայծը սարսափելի էր, իսկ Աստուծոյ ձայնին մոխի բնել որքա՞ն դժուար կուգար:

Այս խորհրդածութեանց մէջ խորասուզուած՝ քնաւ նշմարած չէր թէ արդէն թաքստոցէն դուրս ելած, սեղանին առջեւ կը գտնուէր:

Դեռ տասը վայրկեաններ ալ ներքին կռիւի եւ անյայտութիւնը շահուած էր:

Ձգեց ձեռքին դանակը սեղանին վրայ եւ յափշտակեց հոն գտնուած Աստուածաշունչը, ընտանեկան յարկի քաղցրութեան գաղտնիքները պարփակող այդ Սուրբ Գիրքը, եւ անշուշտ քայրերով շտապեց դէպի դուրս:

Երկար շարաններ մ'նայ թաւառտին թաքստոցներէն միոյն խորը, ուշադիր քննելով Աստուծոյ խօսքը: Այս ժամանակամիջոցին Աստուծոյ Հոգին խօսած էր անոր եւ թողութիւն պարգւած էր իրեն փրկութեան վերաբերեալ այն բոլոր բաները, որ դեռ անձանթ էին իրեն:

Երկար տարիներ անցած էին: Սր մըն ալ իր երկիրը յարձակում կրեց դրացի ցեղէ մը, որու պատճառաւ ինք եւս ստիպուած էր պատերազմի երթալ: Ճակատամարտի մը տաք վայրկեանին՝ յանկարծ տեսաւ ծերունի մը՝ որ վիրաւոր գետին գլորեցաւ իր կողմը: Անմիջապէս գրկեց զայն եւ հեռացաւ այդ մահաժպիւռ վայրէն:


Երբ վիրաւորը կը քնէր, ի՞նչ զարմանք... Յանգցաւ իր նախկին քարոզիչը, որ իր պաշտօնին հաւատաւրիմ մ'իմքեւ կռուի դաշտը գացած էր հոգեւոր անուար մատակարարելու կարօտ հոգիներու:

Մեծ խնամքով ուսը առաւ զայն եւ ուղղակի քարոզիչին տունը տարաւ, որ հազիւ մի քանի քրտմէթը հեռու էր անկէ: Հոն երբ վիրաւորը անտիկցաւ, նախկին աւազակը իր գրպանէն հանեց ընտանեկան Ս. Գիրքը եւ յուզուած ձայնով ըսաւ. «Իր Յանգնա՞ք տիկին Ձեր Ս. Գիրքը, ես Ձեր աղօթքին աղբեցութեամբ դարձի եկած փախստական աւազակ մըն եմ»:

Եւ Տէրօջը շնորհքը չի պակսեցաւ անոր վրայ. քաղող իջին հետ դեռ երկար օրհնաբեր ժամանակէ մը յետոյ՝ անոր մահուանէն վերջ, իր արժանաւոր յաջորդը եղաւ:

Չ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

ՐՈՒՀԱՆԻ ԿԷՐՄԻ



Չօգ միւմինլէր բուհանի սօղուզուգտան իշթիքեա էտէրլէր: Տէրունլէրինտէ արգու էթտիքլէրի սըճազլըղը հիսս էթմէզլէր: Պուհնըն իշիւն տէ չօգ տիւշիւնիւրլէր վէ հաթթա պաճէն մաղմուլմ պիր հալ քէսպ էտէրլէր: Տուա էտէրլէր, ֆազաթ պէլի պիր սէպէպ-

տէ կէօրսէզլէր: Նէ էտէճէքլէրինի շաշըրմըշ տալըղն պիր սիմա կէօսթէրիւրլէր: Աճէպա պուհա նէ չարէ օլապիլիր:

Հէրարէթ նէ տիր: Պիր զէմանլար ալիմլէր տիւշիւնիւրլէր իտի քի հէրարէթ պիր նէվ մատտէ տիր քի պիր նէսնէտէն պաշգա պիր նէսնէյէ կէշէր վէ անը զըզտըրըր: Հալ պուքի պու կիւն օ նազարիյէ պիւսպիւթիւն տէյիշմիշ տիր: Հէրարէթ պիր մատտէ տէյիլ հարաքէթ տիր: Սըճազ պիր մատտէտէն սօղուզ պիր մատտէյէ հէրարէթ կէշտիյինտէ, կէշէն շէյ պիր մատտէ տէյիլ հարաքէթ տիր: Պիր պուզ փարչասը, պաշգա նէսնէլէր կիպի, միլիօնլարճա ուֆաճըզ ճիւզլէրտէն իպարէթ տիր: Պու ճիւզլէրին հէփսի հարաքէթ էտիյօր իսէտէ եէկտիկէրինէ հիշ տօգուհմայօրլար: Ֆազաթ պու ճիւզլէր փէք չափուզ հարաքէթէ պաշլայըպ պիրի պիրինէ չարփարլարսա, պուզ էրիմէյէ պաշլար: Սու օլուր: Սուլը թէշքիլ իտէն ճիւզլէր հարաքէթէ կէլիպ շիտտէթլէ հափայա սօղու աթըլմաղա պաշլարսա, պուհար օլուր, վէ օ ճիւզլէր՝ մաքինալարըն փիսթօնլարընա վուրարազ օնլարը տէճտէրիւր, վէ ֆաիտէլի մազսէտլէրէ գուլլանըրը: Պու պիւթիւն հատիսէտէ էսաս՝ օ ճիւզլէրին հարէքէթի տիր: Հէրարէթ՝ օ ճիւզլէրին շէտիտ հարէքէթիւնտէն պաշգա պիր շէյ տէյիլ տիր:

Պուհնը բուհանի էօմրիւմիւզէ թաթպիզ էտէպիլիրիզ: Կէրմիյէթ վէ բուհանի սըճազլըզ իշիւն տիւշիւնիւրլէր, ֆազաթ աթի տուրուրուզ: Չօգ հասրէթլէրլէ տուա էտէրիզ, ֆազաթ նէֆսիմիզին բահաթընտան պիր հապպէ գուրպան էթմէք իսթէմէյիզ: Պիրատէր վէ հէմշիւրէլէրլէ կիւզէլ կիւզէլ սաաթլարլէ գօնուշմազ իսթէրիզ, ֆազաթ գօմշու մուզտաքի պիր սէֆիլէ էլ ուզաթմազ պիզէ կիւճ կէլիր: Բուհանի եիւքսէքլիյի արգու իտէրիզ, ֆազաթ պիզտէն էնկինէ իշթիքաք կէօսթէրմէյէ թէնէզզիւլ էթմէյիզ: Տաիմա Աքրահամ գուճաղընտա մէսէրէթի կէօնէնմէք արգու իտէրիզ, գափուլըզտաքի եարալը վէ պէրէլիյէ պագմազ իսթէմէյիզ: Սէմափի մէսքէնլէրտէ եաշամազ իսթէրիզ, բահաթ օտալարըմըզտան չըզըպ պաշգալարլէ տէրտտաշըղա կէօնիւլիւզ օլուրուզ: Էպէտի հայաթա մալիք օլմազ իսթէրիզ, անպարլարըմըզըն հիսապ վէ քիթապը տաիւրէսինտէն պաշգա շէյէ ֆիքը վէրմէք իսթէմէյիզ: Եիւքսէլմէք իսթէրիզ, թէվաղու էթմէյէրէք:


Ալմագ իսթէրիզ, վերմէյէրէք: Իգտիյատ պոլմագ իսթէրիզ, սարֆ էթմէյէրէք: Գուվ-վէթ պոլմագ իսթէրիզ, հարէքէթսիզ: Հէրարէթ վէ նուր մէնպա՛ր օլմագ իսթէրիզ, պիր ճիւղիմիզի պիլէ եէրինտէն գըմըլտաթմայա-րագ: Հէրարէթ՝ հարէքէթ տիր, բուհանի հարէքէթ իսէ, թէվագու վէ հիւմ վէ մուհապպէթ վէ ֆէտաքեարլըզ տըր: Բուհանիճէ գըզմագ իսթէր իսէք պիզտէ պուռնլար օլմալը տըր:

Ճօն Ուիլեմ Բալմիթրինին կիւզէլ պիր տու՛ասը վար: Շէօյլէ տէյօր: «Սէն, եա Քրիստոս, պիզի բուհ իւլ գուտսընլա իլգամ էյլէ: Իլահի պէրէքէթինլէ պիզի հարէքէթէ կէթիր: Նէֆսիէրէսթիլիմիզի՝ պէօյիւք մուհապպէթինտէ դարզ էյլէ: Տիւնեանըն էլէմ-լէրինին երւքիւնիւ իւզէրիմիզէ գօ: Պիզի իւք քիլիսանըն ըստուլի կէրմիլէթիլէ սէվզ էյլէ: Փէյղամըմըզ տիւնեայա պէօյլէ թէպլիղ օլունսուն: Պէնի իսրայէլէ սէօյլէ, իլէրի կիթ-սինլէր»: Պու տու՛այը եազան կէնճ եաշընտա կէօզլէրինին նուրընը զայ էտէրէք եաշատը իսէտէ, բուհանի կէրմիլէթինի զայ էթմէտի: Անճագ պու եօլտա հէրարէթ վէ նուր նէշը էտէպիլիթիզ:

Աթինա

(Բրօֆ) Լ. ԼԵԻՈՆԵԱՆ

ՏԱՐ ԵՕԼՏԱ



Եազընտա «Սիօնըն տօսթլարը» նամ դա-գէթա Բէկինա Բօզընպէրկ իսմինտէ իման շա-հիտի Եէնուտի պիր կէնճ գըզըն էօմրիւնի եազ-տը: Մէրգուճէ պիրինճի տէրէճէտէ կիւզէլ վէ զայէթ գուվկէթլի իրատէթ սահիպի պիրի իտի, շէօյլէ քի սէօյլէտիլի պիր սէօզիւ պաշա չը-գարանատէք սէպաթ էտէր իտի:

Բէկինա էվվէլճէ քրիսթիանլըզըն պիր տիւշ-մէնի իտի, լաքին ինճիլի օգուտուպտան սօնրա հագիգաթը պիլտի վէ Քրիստոսը պիլթիւն ճան-տան գապուլ էթտի:

Մէրգուճէ պիր Եէնուտի թիւճարըն գըզը իտի, քրիսթիանլըզը գապուլ էթտիլի սէպէպ-տէն փէտէրինին էվլինի թէրք էթմէլէ մէճպուր օլտու, շէօյլէ քի անըն քրիսթիան էօմրիւ տէր-հալ միւճահատէլէր իլէ պաշլատը: Պունուն իւ-զէրինէ պիր պանգատա մէմուրիլէթ պուլտու, լաքին չօզ կէշմէզտէն պանգա սահիպինին օդ-լու գէնկին պիր կէնճ քէնտինէ թէաշշիւք է-տէրէք էվլէնմէք թէքլիֆ էթտի, Բէկինա իսէ թէքլիֆի ըէտտ էլլէտի, չիւնքի օ պիլթիւն էօմ-

րիւնիւ խէլասքեարընըն խըտմէթինէ վազֆ էթ-միշ իտի: Նէթիճէ շու օլտու քի մէրգուճէ վա-զիֆէսինտէն տէրհալ պրապըլտը վէ նիշէ էլէմ վէ թէատտիլէրէ տիւշար օլտու:

Բէկինա Բուսիանըն Քիու շէհրինտէ Եէնու-տի քրիսթիանլարըն չօպանը Փէթըր Կօրօտի-շին էլիլլէ վաֆթիզ օլունտը: 1919 սէնէսինտէ Բուսիատա չօզ պէրէքէթլէ իշլէմիշ օլան Մէ-նօնայթ սէյլար միւպէշշիլլէրի իլէ պիրլէշտի: Պու միսիօնարլար ֆարգը կըուփլարա (խումը-լարա) թագսիմ օլունարագ իշլէրլէր իտի, Բէ-կինա Եազօպ Տիք իսմինտէ պիր միսիօնարըն կըուփընա աքտ օլտու քի մահիլէթինտէ տէօրթ տանէ տահա իշճիլէր վար իտի: Անլէր պիր միւտտէթ Եէզաթէրինօսլալ շէհրի էթրաֆընտա պուլունան քէօյէրտէ իշլէմէքտէ օլտուլար, օ-րատա տէհշէթլի սուրէթտէ լէքէլի հիւմմա խասթալըզը հիւքմ սիւրիւյօր իտի: Պու մի-սիօնարլար խասթալըզը թախֆիֆ էթմէք ի-չիւն էլլէրինտէն կէլէն հէր շէլի եափտըլար վէ խասթալարա պէօյիւք ֆէտաքեարլըզա խըզ-մէթ էթտիլէր, շէօյլէքի ազ վազթտա օրատա-քի էհալինին մուհապպէթինի զազանտըլար: Պիր քէօյ վար իտի քի սայքի պիլթիւն էհա-լիտի, խուտուսա գարըլար վէ չօճուլար պու խասթալարա խըզմէթ էթտիլէր վէ այնի վա-զթտա ինճիլի վազ էթտիլէր: Պու սըրատա տիւնիզ, անարշիսթ Մախօ իսմինտէ պիր ա-տէմին գօմանտաք ալթընտա ասքէրի պիր ֆըրգա օրայա կէլտի, պու ասքէրլէր արասըն-տա Ալլահըն քէլամընը իշիտէնլէրտէն չօզլար թէվպէ էթտիլէր վէ թապիի սուրէթտէ քէնտի քօմանտանլարընտան ալըլտըլար, շէօյլէճէ թէհ-լիքէլի պիր վազիլէթ քէսպ էթտի վէ անլէր հիսս էթտիլէր քի քէնտիլէրէ գարշը փլանլար թէրթիպ էտիլմէքտէ տիր:

Պու քիւշիւք միւպէշշիլլէր քիւմէսի շէհրին տըշարընտա պուլունան պիր մէյտանա կէօ-թիւրիլտի: Եօլտա միւպէշշիլլէրտէն պիրինէ չօզ գահմէթ վէրտիլէր: Պու էօլիւմ եօլունտա կիտէր իքէն կէօրիւտի քի Բէկինա Քիթապը Մուգատտէսինի ալմըզ վէ քէնտինէ էզիլէթ վէ-րէնլէրտէն պիրինէ փարմաղընա չօզ տէֆա սէ-մայա տօղրու գալտըրարագ սէօյլէյօր իտի: Պու միւճրիմլէր պիր սամանլըզա հապս էտիլ-տիլէր վէ իւզէրլէրինէ սիւհլար պօշալտըլտը: Պիլթիւն քէօյիւ գօրգու սարմըզ վէ սայքի ճիւմլէ էրքէթլէր գաշմըզ իտի վէ պու միսիօ-նարլարը ազատ էթմէք իշիւն հիշ պիր քիմսէ ճէսարէթ էտէմէտի:

Էրթէսի կիւն Մախօնըն ասքէրլէրի սափու-շուպ կիթտիլէր: Մէնօնայթլար քէնտի պիրա-

տէրէրնի արամաղա կիթտիքէրինտէ կէօր-
տիւէր քի պիրատէրէրտէն իքիսի վուրուլմուշ
տիվարա տայալը օլարագ հալա այագ իւզէրի
տուրուլուրլար իտի : Տիկէր պիր պիրատէր վէ
հէմշերէ չօգ ետրէրինտէն պըշագլանմըշ օլարագ
մազթուլ տիւշմիւշէր իտի վէ տիկէր իքի
քիմսէլէրտէ տիգ չէօքմիւշ օլարագ էօլիւ պու-
լունտուլար, պունլարտան պիրի Բէկինա իտի :
Իհիթիմալէն անը պիր խանշէր իլէ էօլտիւրմիւշ-
լէր իտի : Կէօրինիւր քի սօն տագիգէլէ գա-
տար Քիթապը Մուգատտէսինի էլինտէ թութ-
մուշ իտի, քիթապ թամմ եանընտա իտի :

Բէկինա Բօզընպէրկին էօմրիւ գըսսա, լաքին
չօգ միւպարէք օլտու, էօլիւմիւ տախի սէմէրէ-
սիգ գալմատը :

Պու միւպէշշերէրտէն պիրի գաշըպ էօլիւմ-
տէն գուրթուլմուշ իտի, մէրգու Քիուտաքի եէ-
հուտի քրիսթիան քիլիսասընտա Բէկինանըն
շէհիտ էօմրիւ հագգընտա նազլ էլէտի :

Մէրգումէլէ՝ ասլէն եէհուտի իտիլինտէն
օլպիրէրտէն զիյատէ էգիյէթ վէրմիւշէր իտի :

Թէրճէմէ

Ե. Պ.

Լիօն

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆՍԿ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԵՔ ՏԱՄՆԸՎԵՑ

Սաստիկ ձմեռուան մը ցուրտ եւ դժխեմ
մէկ գիշերն էր. խեղճ պզտիկ տղայ մը նիհար,
տժգոյն, ցնցոտիներ հագած, կծկտած էր քա-
րի մը ետին, Տրպլինի փողոցներէն միոյն մէջ :

Անհայր, անմայր, անբարեկամ, երբէք զինք
խրատող կամ առաջնորդող մէկը ունեցած
չըլլալով, իր ժասերը կ'անցնէր փողոցները
թափառելով իր նման ուրիշ դատարկապորտ-
ներու հետ, եւ ի վերջոյ միացած էր գողերու
ընկերութեան մը : Այդ մութ գիշերը ընտրած
էին թալլելու անվարձ տուն մը : Այս տղան
պահակ կեցած էր, մինչ իր ընկերները տան
մէջ գործի վրայ էին : Յանկարծ ձեռք մը
դրուեցաւ իր ուսին վրայ : Արագօրէն ետին
դարձաւ, բայց գիշերը այնքան թանձր էր որ
չկրցաւ տեսնել իր քովը կեցած հսկայ մարդ
մը : Իր առաջին շարժումը փախչելու ճիգ
մ'եղաւ, բայց անծանօթ ձեռքը իր բազուկէն
բռնած զինք իր տեղը կը գամէր : Տղան սկսաւ
բոլոր մարմնովը դողալ մտածելով թէ օձիքը
ոստիկանի մը ձեռք տուած էր, որ զինքը պա-

հականոց պիտի առաջնորդէր : Բայց մեծ
զարմանքով կը լսէ քաղցր եւ բարի ձայն մը որ
կ'ըսէ «Չաւակս, հոս փողոցին մէջ ի՞նչ կ'ընես
գիշերուան այս ուշ ժամուն, քու տարիքդ ու-
նեցող տղայ մը պէտք էր հիմա անկողինն ըլ-
լար, շուտ տուն գնա՝ եւ պառկէ՛» :

«Ես տուն չունիմ, ես անկողին չունիմ կը
պատասխանէ պզտիկը :

«Խեղճ տղայ քեզի կը կարեկցիմ» կ'ըսէ
ձայնը. «Բայց մտիկ ըրէ՛. կ'ուզե՞ս այս գիշեր
տաք սենեակի մը մէջ աղուոր անկողին մը ու-
նենալ» :

«Ահ, ատ ալ հարցնելով բան է, անշուշտ»
կը գոչէ տղան աշխուժօրէն :

«Շատ լաւ, գնա... փողոց... թիւ տունը
որու խոշոր թխագոյն դռան ճիշդ քովը ուրիշ
պզտիկ դուռ մը կայ, հոն պիտի գտնես ամէն
ինչ որ կ'ուզես» :

Հեռանկարը հրապուրիչ էր. Այս խոստումը
ընող ձայնը անկասկած բարեկամի մը ձայնն
ըլլալու էր : Մանուկը համոզուած՝ արդէն
ճամբայ ինկած էր դէպի ցոյց տրուած հաս-
ցէին երթալու. բայց անծանօթ ձեռքը տակա-
ւին զինք կը բռնէր :

«Սպասէ վայրկեան մըն ալ. քեզ հոն չեն
ընդունիր եթէ անցախօսը չգիտնաս : Կարդալ
գիտե՞ս :

«Ոչ, Պարոն» :

«Հոգ չէ, մտիկ ըրէ՛ եւ լաւ միտ առ քեզի ը-
սելիք բաներս. դուն պէտք է զանոնք կրկնես
այն մարդուն որ պիտի գայ քեզի դուռը բա-
նալ : Յովհաննէս երեք տասնըվեց :
Ասիկա անցախօսն է, եթէ մոռնաս քեզ ներս
չեն ձգեր. հիմա վազէ՛, շուտ, երթաս բարի» :

Մանուկը մեկնեցաւ վազելով եւ ճամբուն
ամբողջ երկայնքին կրկնելով «Յովհաննէս երեք
տասնըվեց, Յովհաննէս երեք տասնըվեց» :
Շուտով հասաւ գեղեցիկ տան մը առջեւ. նախ
կարծեց թէ կը սխալի, բայց անծանօթ մար-
դուն տուած նշանները տեսաւ, թխագոյն մեծ
դուռը հոն էր եւ քովը պզտիկ դուռը : Վայրկեան
մը վարանումէ յետոյ ձեռքը երկնցուց եւ զան-
գակին չուանը քաշեց : Դուռը անմիջապէս
բացուեցաւ եւ պզտիկը քանի որ ամբողջ ու-
ժովը զայն կը հրէր, ինքզինքը գտաւ տեսակ
մը սրահի մէջ, ուր մարդ մը բազկաթոռի մը
մէջ նստած, ածուխի լաւ կրակի մը առջեւ
կ'սպասէր :

«Դուն ո՞վ ես եւ ի՞նչ կ'ուզես» ըսաւ ան :

«Յովհաննէս երեք տասնըվեց» :

«Ահ, դու անցախօսը գիտես, շատ լաւ հետս եկուր»։ Եւ իր տեղէն ելլելով պահապանը առաջնորդեց զայն երկար նրբանցքէ մը մինչեւ դուռ մը, զոր բանալով մտցուց երկար եւ ընդարձակ սրահ մը ուր կ'երեւէին երկու շարքի վրայ անկողիներ, որոնց շատերուն մէջ մէյ-մէկ մանուկ կը քնանային։

«Ահաւասիկ քեզի անկողին մը» կ'ըսէ առաջնորդը «պառկէ առանց աղմուկ հանելու եւ գիշեր բարի»։

Մեր բարեկամը իր կեանքին մէջ երբէք այսպիսի աղուոր անկողնի, այսպիսի մաքուր սաւաններու մէջ չէր երկնցած։ «Հոչակաւոր անուն մը ըլլալու է հոս ընդունուելու համար ինծի տրուած անունը փոփոսաց ան, մինչ քունը կ'սկսէր տանիլ, կ'ուզեմ զայն միշտ յիշել, «Յովհաննէս երեք տասնըվեց, Յովհաննէս երեք տասնըվեց... Յով հան նէս... երեք... տասնը...»

Գիշերը մէկ կտոր քնացաւ, եւ երբ արթնցաւ առաւօտը շատ ուշ էր, կէս օրուան մօտ։ Միւսները գրեթէ ամբողջն ալ մեկնած էին։ Շատ լաւ հանգստացած էր։ Իրեն տուին գաւաթ մը տաք կաթ եւ մեծկակ կտոր մը կակուղ հաց զոր ախորժակով քանի մը պատահ ըրաւ։ Յետոյ տեղեկացաւ թէ ուր կը գտնուէր։ Իրեն ըսին թէ մանկանց գիշերուան պատուարան մ'էր այս, թէ ցորեկը հոն չէր կրնար մնալ, բայց դեռ գիշեր մըն ալ իրեն տեղ պիտի տրուէր. եւ եթէ երեկոյեան կանուխ գար, մարդիկ կային, որոնցմէ կրնար ուրիշ մանրամասնութիւններ իմանալ։

Կէս օրէն ետքը քաղաքին մէջ թափառելով անցուց, առանց իր ընկերները փնտռելու. եւ որպէս զի անոնցմէ մէկուն չհանդիպի, սովորականէն տարբեր փողոցներ պտտեցաւ։ Գլուխը կախած կը քալէր եւ կը մտածէր երէկ գիշերուէն ի վեր պատահածներուն վրայ, անդադար իր անցախօսը կը կրկնէր եւ կը մտածէր թէ ի՞նչ կրնար ըլլալ անոր նշանակութիւնը։

Իր խորհուրդներով այնքան տարուած էր որ փողոց մը կտրած անցած պահուն չտեսաւ կողք մը որ սրարշաւ կ'ընթանար։ Քանաւորով վազող ձիէն զարնուած մէկ կողմ փրուեցաւ եւ գլուխը ուժգին բաղխում մ'ունեցաւ սալայատակին վրայ։ Վիրաւորուեցաւ բայց բարեբաղդաբար առանց անիւներուն տակ մնալու։ Զինքը մարած վերցուցին եւ տարին ամենէն մօտակայ դեղարանը, ուր ամենէն ան-

հրաժեշտ առաջին խնամքները տրուեցան, յետոյ պատգարակի մը վրայ հիւանդանոց փոխադրուեցաւ։ Ճամբան ինքզինքին եկաւ, եւ երբ ընդունուեցեան սրահին մէջ վար դրին պատգարակը, իր իմացականութիւնը վերստացած ըլլալուն համար զինք սովորական հարցաքննութենէ անցուցին։ Անունդ ի՞նչ է, քանի՞ տարեկան ես»։ Ընդունուած միակ պատասխանն էր «Յովհաննէս երեք տասնըվեց»։ Ասիկա հիւանդապահները կուշտ մը ինդացուց, կարծեցին թէ գլխուն բաղխումը իր իմացականութիւնը խանգարած էր։ Գլխու վէրքէն զատ երկու երեք ուրիշ շատ ծանր վէրքեր ստացած էր, զորոնք փաթթելէ յետոյ զինք անկողին դրին։ Քիչ յետոյ ջերմը եկաւ եւ յետոյ զառանցանքը, որու ընթացքին անդադար կը կրկնէր «Յովհաննէս երեք տասնըվեց... պէտք չէ որ մոռնամ... Յովհաննէս երեք տասնըվեց... իմ օգուտիս համար է»։

Այս բառերը ուրիշ հիւանդներու ուշը գրաւեցին։ Անոնցմէ մին որ հաւատացեալ մըն էր, իր գլխուն վերեւի «Նոր Կտակարան»ը բացաւ եւ բարձր ձայնով կարդաց Յովհաննէսի աւետարանական երրորդ գլխուն տասնըվեցերորդ համարը։

«Վասն զի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր միածին որդին տուաւ, որպէս զի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապալաւիտենական կեանք ունենայ»։

Այս այն համարն է, զոր Լուտեր Աստուածաշունչին մանրանկարը կը կոչէր, որովհետեւ իր ամփոփման մէջ ան կը պարունակէ ամբողջ Աւետարանին հիւթը։ Ս. Գրքին այս խօսքերը որ հիւանդանոցի բովանդակ սրահին մէջ արտասանուած էր, ընկերացած խեղճ պզտիկ տղուն անգիտակցաբար տուած մեկնութեամբը, որով չէր դադրէր կրկնել «Իմ օգուտիս համար է, իմ օգուտիս համար է» ամէնուն վրայ դիւթիչ տպաւորութիւն մը թողուցին. մէկէ աւելի սրտեր դարձան դէպի երկնաւորը, որուն կոչերը մինչեւ այն օր իրենց անտարբերութեան կամ ապստամբութեան բաղխած էին։ Երբ պզտիկ տղան իր ջերմէն սթափեցաւ, իր շուրջը զարմացած ակնարկներ պտտուցուց։ Ի՞նչ սրահ էր այս հսկայ եւ լուռ սրահ, որոնք էին զինքը շրջապատող այս անծանօթ դէմքերը։

«Բարի լոյս, Յովհաննէս երեք վեց» ըսաւ իր անկողինին դրացի հիւանդ մը «այսօր աղէ՛կ ես»։

«Ինչպէս կ'ըլլայ որ իմ անունս գիտէք» հարցուց զարմացած:

«Դուն ժամերէ ի վեր անդադար զայն կը կրկնես, բայց մի վախնար ձեռքէդ չեմ առներ, ոչ ալ զքեզ կը մեղադրեմ, ընդհակառակը: Դուն ինծի յիշեցուցիր այն ինչ որ մայրիկս ինձ սորվեցուցած էր եւ որ մոռցած էի»: Եւ տեսնելով մանկան աւելի եւ աւելի զարմացումը, շարունակեց. «Ես կը տեսնեմ թէ դուն չես գիտեր քու անունիդ իմաստը. կեցիր քեզի բացատրեմ»: Ասոր վրայ անիկա պատմեց հին, պատուական, անոյշ պատմութիւնը Յիսուսի, որ եկած է կորսուածը փնտռելու եւ փրկելու: Անիկա խօսեցաւ մանկան, փրկչին վրայօք, ըսաւ անոր թէ ինչպէ՞ս մեր սիրոյն համար, Ան կամովին ձգած էր երկնքի փառքը գալ մեր դժբաղդ երկրին վրայ չարչարուելու եւ մեռնելու: Անիկա կարդաց Նոր Կտակարանին մէջ Յիսուսի պատմութեան ամենէն աչքառու տեղերը, անոր փառաւոր խոստումները, սրտառուչ առակները, կորսուած ոչխարը, Անառակ որդին, մանր տղաքը որ Ան ծունկերուն վրայ կ'առնէր եւ կ'օրհնէր... Մանուկը մտիկ կ'ընէր կաթոգին եւ առանց ձանձրանալու: Պէտք եղաւ իրեն կրկնել նոյն պատմութիւնները քանի մը անգամ եւ քանի մը օր յետոյ, անիկա բոլորը գոց գիտէր: Քիչ օրեր յետոյ իր դրացին ապաքինած մեկնեցաւ զայն ողջագուրելէ եւ միասին աղօթելէ յետոյ: Բայց անոր մեկնելէն ետքն իսկ պզտիկը ինքզինք մինակ չէր զգար: Յիսուս իրեն յայտնուած էր իբր իրեն կենդանի փրկիչը, որուն ներկայութիւնը կ'զգար, որուն ձայնը կը լսէր:

Ապաքինման շրջանին, որ երկար տեւեց, հոգիներու Հայրը անոր անկողինին մօտ միշտ այցելու, աղօթող, իրեն համար Աստուածաշունչը կարդացող եւ Փրկչին վրայօք իրեն խօսող հաւատացեալ բարեկամներ պակաս չըրաւ: Կամաց կամաց իր հաւատքի պլպլուն պատրոյզը բոցավառեցաւ եւ արմատացաւ: Ոտքի ելլելէն յետոյ զայն դպրոց մը դրին ուրնա սորվելու մեծ կարողութիւն եւ արագ յառաջդիմութիւն ցոյց տուաւ:

Տղան այժմ մեծցած է, Աւետարանիչ (բարոգիչ) եղած է մեծ քաղաքի մը մէջ ու հաւատարիմ ու օրհնեալ վկայութիւն մը կը տայ Քրիստոսի սիրոյն:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

ՀԱՒԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

— 0 —

ԵՐԲ


Վշտացած ես, տխուր ես
Մեղանշած ես
Վշտագի մէջ ես
Հոգեբով բեռնաւորուած, անհանգիստ ես
Վշտացած ես, յուսալքուած,
սիրտդ կազդուրման կը կարօտի
Մարդոցմէ անարգուած ես
Կապած յարձակած է վրադ
Աստուած քեզմէ հեռացած կերելի
Հաւատքդ զօրացման կը կարօտի
Դործիդ համար քաջալերութեան պէտք ունիս
Կը փափաքիս պտուղ բերել
Աշխարհ քու աչքիդ Աստուծոյ տեղի զօրաւոր կերելի
Խաղաղութեան պէտք ունիս
Կ'ուզեմ գիտնալ երջանկութեան գաղտնիքը
Քրիստոնէական վստահութեան կը կարօտիս
Ազօթ քնեքդ կ'սկսին անձիդ շուրջ դառնալ
Սիրելիներէ՝ կը բաժնուիս
Աստուծոյ Տունը երթալէ առաջ
Աստուծոյ լաւ պաշտամունք մը ծառայելու համար

ԿԱՐԴԱ

Յովհ. ԺԴ.
Սաղմ. ԾԱ.
Սաղմ. ՂԱ.
Մատթ. 2. 19-34
Սաղմ. ԼԴ.
Հռովմ. Ը. 31-39
Յովհ. Է.—ԺԷ գլխիւ.
Սաղմ. ՃԼԹ.
Եբր. ԺԱ.
Յեռուայ Ա.
Յովհ. ԺԷ.
Սաղմ. ՂԱ.
Մատթ. ԺԱ. 23-30
Կողոս Գ. 12-17
Հռովմ. Ը. 1-30
Ա. Կորնթ. ԺԳ. եւ
Սաղմ. ԿԷ
Սաղմ. ՃԻԱ.
Սաղմ. ՁԴ.
Եսայ. ԾԸ. 1-12

Նոր ապաշխարած քրիստոնեան թող կարգաւ իրարու վրայ հետեւեալ կարգով.

Աւետարան ըստ Յովհաննու 2 անգամ
Աւետարան ըստ Ղուկասի 5 անգամ
Ա. թուղթ առ թիտաղ. 5 անգամ
Թուղթ առ Հռովմայեցիս 5 անգամ
Թուղթ առ Եփեսացիս 5 անգամ.



Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպար, Կրէցեան, 40, Րիւ. տէ Տոմինիքէն, Մարտէլլ